



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

634.8

Մ-35

ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վ Ա Ջ Ի Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀՍԽՄ ԶՈՂԺՈՂԿՈՄՍՏ

30 JUL 2010

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑ.-ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 2 (169)

634.8
Մ-35

ԱՇՈՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱԶԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1008
34360

Պետերատի տպարան
Գլավիթա 7351 (բ.)
Պատվեր 1807
Ցիրած 3000

Արքայրեց՝ Բ. Խաչատրյան

Հանձնված է արտագրության 22/Մ 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 10 հուլիսի 1932 թ.

1. ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ

«Բանվոր դասակարգի նյութական դրությունն ե՛լ ավելի բարելավե-
լու խնդիրն ավելի մեծ պահանջ է դնում ե՛լ ավելի զարգացնել աշխատ-
ծությունը և խաղողագործությունը» (ՀԿ (բ) Կենտկոմի Բյուրոյի
գեկտեմբերի 10-ի վերոշումից) :

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման
վրա կուսակցությունը լիովին լուծել է հացահատիկային պրոբլեմը,
անասնապահության պրոբլեմի արագ լուծման համար ապահովել է բայ-
շեիկյան տեմպեր և խնդիր է դրել՝ «լայնացնել խաղողագործության և
պտղատու ծառերի տարածությունը» (Համ. Կ(բ) ԿԿ 31 թ. հոկտ.
31-ի բանաձևից) :

Մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման եկո-
նոմիկան թերադրում է խաղողագործության զարգացման խկապես հըս-
կայական տեմպեր և ապահովում է խաղողի սպառման լայն հնարավո-
րություններ: ԽՍՀՄ Հողօրդկոմատի տվյալների համաձայն, յերկրորդ
5-ամյակում, այն ե՛ 1937 թ. խաղողի այգիների տարածությունը պետք
է ընդարձակվի մինչև 1,170,000 հեկտար՝ ներկայումս յեղած 226,000
հեկտար տարածության փոխարեն:

Այս բրոշյուրում հեղինակը նպատակ է դնում համառոտ կերպով
ճանոթացնել ընթերցողին խաղողի վազի մշակույթին: Այստեղ շատ
կարճ և պարզ կերպով նկարագրված են խաղողի վազի առանձին մա-
սերի կազմությունն ու գործունեյությունը, խաղողի արտադրության
գործոնները, կարևորագույն փոփոխանքների նկարագրությունը: Մի քիչ
ավելի լայն են բացատրված խաղողի այգու կազմակերպման հարցերը
և նրա խնամքը:

Տվյալ բրոշյուրն ողտագործելիս անհրաժեշտ է նկատի ունենալ
առանձին տեղերի կլիմայական, հողային և այլ պայմանները և ըստ այնմ,
կիրառել համապատասխան միջոցներ և աշխատանքի ձևեր:

ՀԵՂԻՆԱԿ

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ոստղողագործությունը ժամանակակից և նախադասական մարդուն: Հնագույն կուլտուրական ժողովուրդների մեջ մենք գտնում ենք խաղողագործության հետ ծանոթ լինելու վորոշակի հետքեր: Հնագույն կուլտուրաների դանազան Փրեսկաներ, բարելյեֆներ և հուշարձաններ շուրջ են տալիս, վոր, որինակ, Յեզիպոստում խաղողագործությունը հայտնի յե յեղել մեղնից 12.000 տարի առաջ, կամ Խերսոնեսում՝ 8000 տարի առաջ—դասական հնության եպոխայում:

Չորրորդ դարից մնացած խաղողի նկարներ գտնված են Իտալիայում և Ֆրանսիայում: Արևիկան առաջին ցեղերը ցրվելով Յեզիպոստում՝ հանդիպել են խաղողի, ինչպես իրենց արդեն ծանոթ մի բույսի և մշակել այնպես, ինչպես իրենց արդեն ծանոթ և յեղել:

Յեզիպոստում խաղողի հին, պատմական շրջաններ են յեղել Հունաստանը, Հռոմը, ապա Ֆրանսիան, Իսպանիան և Պորտուգալիան:

Պատմական ավայրերը վկայում են, վոր Ռուսաստանում, խաղողագործությունն անցյալում աչքի ընկնող զարգացում և ունեցել Ղրիմում և Կովկասում: Դեռևս հունական գաղութների ժամանակ Ղրիմում զարգացած էր զինեղործությունը. իսկ Կովկասում խաղողագործությունը զարգացած էր, որինակ՝ Գուլիստում, Հալաստանում և այլն:

Ներկայումս խաղողի մշակույթի համաշխարհային տարածությունը մոտավորապես հավասար է 10,5 միլիոն հեկտարի:

ՈՍՂՄ խաղողը բռնում է 226.000 հեկտար տարածություն: Ըստ միութենական հանրապետությունների և ավտոնոմ շրջանների՝ բաժանված է հետևյալ կերպ.—

Ռ Ս Ֆ Խ Հ

ՂՐԻՄԻ ԱՎՏՈՆՈՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Հիմնական շրջանը հարավային ափն է, մասնավորապես Յալտան և նրա շրջակայքը: Արտադրվում են լավագույն զեսերտի և թունդ գինիներ: Առանձնապես արժեքավոր է զեսերտի Մուսկատ կոչված սպիտակ, վարդագույն և սև գինին:

Սեղանի գինիներ պատրաստվում են Ալուչտայի, Մուզակի և Ֆեոդոսիայի շրջաններում:

ՀՅՈՒՄԻՍՏՅՈՒՆ ԿՈՎԿԱՍԻ ՇՐՋԱՆ.— Ըստ Հողօդկոմսարի ավայրերի՝ տարածությունը 20.000 հեկտար: Հիմնական շրջանները՝ Սև ծովի ափերը (Անապա, Աբրաու-Գյուբսո), վորտեղ պատրաստվում են սեղանի տիպի նուրը (Ռիսլինդից) և փրփրուն գինիներ, վորոնք հայտնի յեն շամպայն անունով: Դոն դեաի հյուսիսային շրջանը, վորտեղ պատրաստվում են փրփրուն հայտնի գինիներ (Յիմլյանյան):

ՄԻՋԻՆ ԱՄԻԱ. (Ուզբեկստան, Թուրքմենստան, Տաջիկստան).— Տարածությունը մոտավորապես 40.000 հեկտար. արտադրվում է լավագույն քերմիչ և ամենալավ տեսակի եքսպորտի սեղանի խաղող, որինակ՝ Նիմրանդը սեղանի խաղողի փոփոխակը համաշխարհային սեղանի է չափել՝ ամուր դերք դրավելով արտասահմանյան շուկայում: Միջին Ասիան ունի զեսերտի բարձրորակ գինիներ սայու բույր հնարավորությունները:

ՌԻԿՐԱԿԵՆԱՅԻ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Տարածությունը 23.315 հեկտար: Լավագույն շրջաններն են Դենեպրի ափերն ու Սև ծովի ափը. արտադրվում են սեղանի լավ գինիներ: Արվան տեսակներից Ազովյան ծովի ափերում տարածված է սպիտակ Շասյան:

Ա Ս Ֆ Խ Հ

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Տարածությունը հասնում է 34.000 հեկտարի. արտադրվում են բարձր վորակի սեղանի գինիներ կախեթիայում, Բարթալիայում և Իմերեթիայում:

ԱԳՐԲԵՋԱՆԻ ՍԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Տարածությունը 27.000 հեկտար, բերքի զգալի մասը գնում է սպիրտ պատրաստելու վրա: Գինիները բարձրորակ չեն: Ունի սեղանի խաղողի լավ փոփոխակներ (Թալիբիդենի, Գյանջայի):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.— Տարածությունը 11.000 հեկտար: Կարելի յե արտադրել թունդ և լիկյորային բարձրորակ գինիներ: Յերկաթուղի անցկացնելուց առաջ Հայաստանի այգիների բերքի մի մասը գնում էր սպիրտ պատրաստելու վրա: Հարուստ է ավան խաղողի փոփոխակների բազմազանությամբ:

Որհնորդային Հայաստանում այգիների զարգացումը յերկրորդ հրդամյակի վերջին (1937 թ.) հասնելու յե այն աստիճանի, վոր մենք ունենալու յենք ներկա 11.000 հեկտարի գիմաց 29.000 հեկտար: Այդ տարածությունն ըստ այգեղործության ուղղության՝ բաշխվելու յե հետևյալ կերպ.—

Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր	Թարմ	Կոն- ցենտ- րատ	Գինի	Հյուսթ	Չամիչ	Վ ո Ր Թ Գ		
						Ընդա- մենը	Ներ- կա- յումը	Պիտի- անի
1. Աշտարակ	2300	2,50	2000	1450	—	7800	1640	6160
2. Վաղարշապատ	1200	2200	1800	—	—	5200	1742	3458
3. Ղամարու	800	1300	1200	1300	—	4600	3468	1132
4. Վեդի	600	700	—	—	—	1300	518	782
5. Յերևան	1200	—	600	—	—	1800	1187	613
6. Կոտայք	208	—	—	—	—	208	208	—
7. Թալին	500	1450	—	—	1450	3400	—	3400
8. Ղուրղուղուլի	1300	—	—	1600	—	2900	700	2200
9. Դարալագյազ	400	1000	—	—	—	1400	570	830
10. Մեղրի	100	—	200	—	—	300	172	122
11. Գորիս	100	—	—	—	—	100	100	—
Ընդամենը՝	8700	8700	5800	4350	1450	29008	10305	18703
Տոկոսներով	30	30	20	15	5	100	35,52	64,48

Նոր գնվող ալգիններում, ըստ չըջանային ուղղութիւնն՝ տարածու-
թիւնը բաշխվելու յե հետեյալ կերպ (տոկոսներով). —

Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր	Խաղողագործութիւնն ուղղութիւնն					
	Թարմ	Կոն- ցենտ- րատ	Չամիչ	Հյուսթ	Գինի	Ընդամենն. տոկոս.
Աշտարակ	34,7	9,3	—	23,5	32,5	100
Վաղարշապատ	29,6	18,3	—	—	52,1	100
Ղամարու	24,7	—	—	22,3	53,0	100
Ղուրղուղուլի	55,9	—	—	44,1	—	100
Վեդի	66,5	33,5	—	—	—	100
Յերևան քաղաք	100	—	—	—	—	100
Թալին	14,8	42,6	42,6	42,6	—	100
Դարալագյազ	45,2	54,8	—	—	—	100
Մեղրի	60,0	—	—	—	39,1	100

3. ՎԱՋԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ-ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ

Խաղողի թուփը բաղկացած է արմատից, բնից, ճյուղերից, բող-
բաջներից, տերևներից, թելիկներից, ծաղիկներից և պտղից:

ԱՐՄԱՏՆԵՐԸ.—Խաղողի արմատի, ինչպես և բոլոր այլ բույսերի
արմատների գլխավոր նշանակութիւնն այն է, վոր նրա միջոցով բույսը

հողից և ստանում էր ածման համար անհրաժեշտ սննդարար նյութերը
և ծառայում է թիփ ամրացմանը:

Արմատի ծայրը վերջանում է արմատային ծածկոցով:

Մննդարար նյութերը ծծվում են արմատների վրա դոնոված մաղմը-
ղուկներով:

ԲՈՒՆԸ.—Վայրի դրութիւնն մեջ խաղողի վաղի բունը շատ մեծ չա-
փերի յե հասնում, ինչպես բարձրութեամբ, նույնպես էլ լայնութեամբ:
Խաղողի վաղն աճում է լիանների նման՝ բարձրանալով բարձր ծառերի
վրա:

Մշակված վաղի բնի մեծութիւնը և ուղղութիւնը կախված են մշա-
կող ալգեադրից:

Բունը վրայից ծածկված է լինում կեղևով, վորը պարբերաբար նու-
րոպիւմ է և վորի մեռած շերտերը յուրաքանչյուր տարի պոկվում են:

Վորոջ տեղերում, ինչպես Ղրխում, Ֆրանսիայի հարավում և այլն
անհրաժեշտ է վաղ դարնանը հին կեղևը հեռացնել և այլեւ, վորովհետեւ
այդտեղ կեղևի տակ, դոնտղան միաստուռ միջատներ են ձմեռում:

ՃՅՈՒՂԵՐԸ.—Խաղողի վաղը նկատելի կերպով ճյուղավորվում է:
Բնից դուրս յեկած ճյուղերն անվանում ենք թևեր. թևերի վրա դրա-
նում են մատները, վորոնց վրա դոնոված աչքերից դուրս են դալիս
շիվեր:

Մատները կաղմված են հանդույցներից և միջհանդույցներից:

Միջհանդույցների նորմալ յերկարութիւնը լինում է 8-10 սմ.,
ըստ վորում ներքեկները և ծայրերինը լինում են ալեւի կարճ, միջոցեւ
մեջտեղում կարող են լինել և ալեւի մեծ:

Մատը մեջտեղից կտրելիս կարելի յե նկատել հետեյալ մասերը.
կեղև, կամիւմ, փայտանյութ և միջուկ:

Կեղևում դոնովում են մանվածային և անոթային հյուսվածքներ:

Այն նյութերը, վոր մշակվում են տերևների մեջ, անցնում են կե-
ղևի անոթային հյուսվածքների միջով և նպաստում թիփ նոր սրգաններ
կաղմելուն կամ դարգացնում են յեղածները: Կեղևի անոթներում աչ-
նանը հալաքվում են պահեստի սննդարար նյութեր, վորոնք ծառայում
են հետեյալ տարվա բողբոջների և կամ շիվերի սկզբնական դարգաց-
մանը:

Փայտանյութը նույնպես բաղկացած է մանվածային և անոթային
հյուսվածքներից: Անոթային հյուսվածքները ծառայում են իրրե սննդա-
րար նյութեր հասցնողներ, վորոնք դալիս են արմատներից:

Կեղևի և փայտանյութի միջև դոնովում է մի շերտ, վոր կոչվում
է կամբիւմ:

Կամբիւմը բաղմացնելով էր բջիջները՝ տալիս է ներսի կողմից փայ

տանյութի շերտ, իսկ արտաքին կողմից՝ յուրի (կեղևի) շերտ: Դրա շը-
նորհիվ է, վոր բունը, թևերը, մասները և շիվերը հաստանում են:

Միջուկը գտնվում է փայտանյութի կենտրոնական մասում: Հան-
դույցներում, վորոշ մասում յերկու միջհանդույցների միջուկները բա-
ժանվում են իրարից փայտանյութի բարակ շերտով, վորը կոչվում է
գլխաՓրագմա:

ԲՈՂԻՈՋՆԵՐԸ.—Խաղողի բողբոջները կամ, ինչպես սովորաբար ա-
սում են՝ աչքերը հանդիսանում են ապագա շիվերի սաղմերը և գտնվում
են յուրաքանչյուր տերևի ծոցում: Ընդհանրապես նրանք լինում են բարդ:

Յեթե այդ բարդ աչքերի բողբոջներից մեկը հենց առաջին տարին
զարգանում է և դառնում շիվ՝ ապա վերջինս կոչվում է բեծ: Չզարգա-
ցած բողբոջը կոչվում է քնած: Այդ նույն բարդ աչքի բողբոջներից մե-
կը, վորը մյուսներից ավելի մեծ է՝ կոչվում է գլխավոր և հետևյալ
տարին տալիս է շիվ:

Մյուս բողբոջները, վորոնք դասավորված են գլխավորի շուրջը՝
կոչվում են փոխարինողներ. գլխավոր բողբոջից աճած շիվի փչացման
դեպքում սովորաբար զարգանում են փոխարինողները:

Բողբոջները ապագա շիվերն են հանդույցներով, վորտեղ գտնվում
են ծաղկաթուփյուններ՝ սաղմային դրուժյան մեջ:

ՏԵՐԵՎՆԵՐԸ.—Խաղողի տերևը կատարում է յերեք գլխավոր գոր-
ծողութուն.—աստիճիլացիա, շնչառութուն և գոլորչիացում:

Խաղողի տերևները դասավորված են շիվի հանդույցների վրա՝ հեր-
թով նրա յերկու կողմից:

Տերևը բաղկացած է կոթունից և սկյուտեղից: Տերևակոթերի անոթա-
մանվածային խրճերը հանդիսանում են շիվի անոթա-մանվածային խըր-
ճերի շարունակութունը և ծառայում են տերևի ու վազի այլ սրզանների
մեջ գտնված նյութերի փոխանակությանը՝ իբրև փոխանցման միջոց:

Տերևակոթից դուրս են գալիս սկյուտեղի հինգ ջղեր, վորոնք իրենց
հերթին բաժանվում են մի շարք յերկրորդական, յերրորդական և այլ
ճյուղավորությունների: Այդ բոլոր ճյուղավորությունները պարունա-
կում են անոթա-մանվածային խրճեր:

Սկյուտեղը բաղկացած է վերին եպիդերմիսից, պալիսադային և
սպունգային հյուսվածքների արանքում են դասավորված լինում ջղերի
անոթա-մանվածային խրճերը:

Սկյուտեղը ներքևի կողմից յերբեմն ծածկված է լինում թավով:

ԹԵԼԻԿՆԵՐ.—Թելիկներն ոգտակար որգաններ են հանդիսանում,
վորովհետև նրանք կառչում են լարից և կամ հենարանից՝ այդպիսով

պահելով բերքով ծանրարևոնված շիվը, հեշտացնում են կապը և յերբեմն
կարող են ծառայել իբրև տեսակներ վորոշող մի նշան:

Թելիկները գտնվում են տերևների դիմաց՝ հանդույցների վրա,
ընդ վորում ներքևի 4-5 տերևների մոտ սովորաբար թելիկներ չեն լինում:
Յեվրոպական վաղերի, ինչպես և ամերիկյանների (բացի լարբուսկայից)
յուրաքանչյուր թելիկ ունեցող յերկու հանդույցից հետո գալիս է մի
հանդույց առանց թելիկի: Պողատու ծաղկաթուփյունից հետո յեկող
թելիկից վեր այլևս նոր ծաղկաթուփյուն, հետևապես նոր վոխկույզ-
ներ չեն լինում:

ԾԱՂԻԿՆԵՐ.—Խաղողի մշակվող վազը յերկսեռ ունեցող մի բույս է՝
իզական և արական որգաններով:

Խաղողի ծաղիկը բաղկացած է բաժակից՝ հինգ կիսազարգացած բա-
ժակաթերթերով, պսակից, առեչքներից և վարսանդից: Պսակը նույնպես
բաղկացած է հինգ պսակաթերթից: Պսակաթերթերն ամուր միացած են
իրենց ծայրում և ծաղիկը ժամանակ նրանք ծաղկակալից պոկվում են
հիմքի մասերով, վորի հետևանքով ծաղիկ վրա առաջ է գալիս պսակի
մի տեսակ գլխարկ: Ծաղիկ արական որգանը բաղկացած է հինգ առեչ-
քից, վորոնք դասավորված են պսակաթերթիկների դիմաց: Ծաղիկի ի-
զական որգանը կամ վարսանդը կազմված է սերմարանից, սունակից և
սպիկից:

Հաճախ պատահում են ծաղիկներ, վորոնց առեչքների փոշին լինում
է ամուր. այդ դեպքում առեչքներն ընդհանրապես կուացած են լինում դե-
պի ներքև: Նման ծաղիկները կոչվում են ֆիդիլոլոգիսպես իզական ծա-
ղիկներ:

Լինում են դեպքեր, յերբ թե առեչքները և թե վարսանդն ընդունում
են պսակի ձև, այդ դեպքում էլ նրանք մնում են անպտուղ:

ՊՏՈՒՂՆԵՐ.—Խաղողի վողկույզը կամ ճուժը բաղկացած է վող-
կուղակոթից, վորի միջոցով վողկույզն ամրանում է շիվին՝ ճյուղավոր-
ված չանչից, վորի ծայրերին պողակոթեղի միջոցով միացած են խա-
ղողի հատիկները:

Խաղողի պտուղները գտնվում են միշտ մատից դուրս յեկած շիվերի
վրա, յերկրորդ կամ յերրորդ տերևից վերև՝ բռնելով տարբեր բարձրու-
թյուններ:

Վողկույզից վերև առաջ յեկող թելիկն ամենաճիշտ նշանն է, վոր հե-
տո շիվի վրա վողկույզներ չեն լինի:

Պտուղները կազմված են մաշկից, միջուկից և սերմից: Մաշկը
ծածկված է լինում մոմային շերտով:

Միջուկը բռնում է պողի մեծ մասը և իր մեջ պարունակում է հյութ:
Սերմն առաջ է յեկել սերմնարանի զարգացումից:

Պողի ձևերը լինում են շատ բազմատեսակ (կտր, յերկարավուն, ձր-
վածև և այլն) :

Չանաղան տեսակներ ունենում են զանազան ձևի սերմեր : Պատու-
ներում սերմերի թիվը լինում է 1-4, բայց լինում են նաև տեսակներ,
վորոնք բոլորովին սերմ չեն ունենում (քիշմիչ, ասկյարի, կորինթի) :

4. ԱՅԳՈՒ ՀՈՂԻ ՀԱՄԱՌՈՑ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաղոզի վազը վերին աստիճանի քիչ պահանջկոտ է հողի վերաբեր-
մամբ, մասնավորապես յեվրոպական վազը, վոր աճում է համարյա սմեն
տեղ :

Համեմատաբար պահանջկոտ է հողի նկատմամբ ամերիկյան Փիլոք-
սերային դեմացիուն տեսակը :

Հողից է կախված նաև պտղատուլթյունը :

Պաղոզի վազի համար պետք է շուտ տաքացող ու չորացող և բավա-
բար կերպով ջուր չթափանցող հող : Նման պայմաններում ստացվում է
լավարար աճեցողութուն, բերք և բարձրորակ պտուղ :

Պաղոզի համար տարածութուն հատկացնելիս պետք է առանձին
ուշադրութուն դարձնել յենթահողի կազմության վրա :

Անցնենք հողի հիմնական տեսակների բնութագրմանը :

Հրաբխային ծագում ունեցող հողեր (բազալի, անդեզիտի, լավա-
յի, տրախիտի և այլն քայքայուելից առաջ յեկած) .— Ջրաթափանց են,
ունեն պետք յեղած ծակոտիկներութուն, կալիի աղերի և Փոսֆորային
թթվուտի մեծ պաշար : Այս հողերի վրա ստացվում է շատ քաղցր խա-
ղող և լիկյորի ու դեսերտի դինիններ :

Ավազային հողեր .— Ջրաթափանց են, ջրունակ, հեշտությամբ մշակ-
վող : Ավազային հողի կարևոր հատկութուններից մեկը, յերբ հողն ու-
նի 60-75 տոկոս կվարցի ավազ, այն է՝ վոր խաղողը կարելի յե վար-
դացնել առանց պատվաստման, առանց վախենալու Ֆիլոքսերայից :

Ավազային հողերի պահասությունն է՝ արագ տաքանալը և արագ
սառչելը, ինչպես և աղոտ պարունակող պարարտանյութերի մեծ կա-
րիքը :

Ավազային հողի վրա խաղողը լավ է աճում և պտղաբեր է լինում :

Կավային հողերը հազվադեպ դեպքում են հատկացվում խաղողին :

80 տոկոս կավ պարունակող հողն անպետք է փորե և մշակույթի,
նույնպես և խաղողի մշակույթի համար, քանի վոր խոնավությունը
նրանում դանդաղ է չորանում : Մշակման համար այդ հողը շատ դժվար
է : Պաղոզի արմատները դժվարությամբ են խորանում նման հողի մեջ :

Ավազի, խճի, կրի ավելի կամ պակաս խոռոտաբեր կավային հողում
ապահովում է (մասնավորապես հարավային շրջաններում) բավական լավ
վորակի խաղող, վորը, սակայն, հասնում է սովորականից բավական ուշ :

Կրային հողն առավելապես արժեքավոր է հյուսիսում, վորովհետև
այդտեղ ավելի ուշ է սկսվում վեղետացիան, հետևապես և պակասում է
դարձանային սառնամանիքների ազդեցության վտանգը :

Այս հողերը հեշտ են մշակվում և մոլախոտեր համեմատաբար քիչ
են պարունակում : Այս հողերը համեմատաբար աղքատ են սննդաբար
նյութերով : Պարարտացնելիս (մասնավորապես գոմադրով) նկատելի-
որեն բարձրանում է սպողատուլթյունը :

Ստացվում են նուրբ, շատ բարձրորակ դինիններ :

Այս հողերից ստացվում է շաքարային բարձր տոկոս ունեցող խաղող,
բայց բերքը լինում է քիչ :

Սևահողերը պակաս ջրաթափանց են : Շատ են տաքանում, հա-
րուտ են սննդաբար նյութերով, առանձնապես աղոտով : Տալիս են ա-
ռատ բերք . այս հողի վրա թփերը շատ փարթամ են լինում, բայց խաղողը
ստացվում է վոչ բարձր վորակի :

Ընդհանրապես հողերի վերաբերմամբ անհրաժեշտ է նկատի ունենալ
նաև նրանց դույրը : Հողերը լինում են սպիտակ, դեղին, կարմիր, սև
և այլն : Գույնի ազդեցությամբ փոփոխվում է հողի և ընդհանրապես
միջավայրի տաքութունը, իսկ վերջինից մեծ կախում ունի վազի աճեցո-
ղությունը, բերքի վորակն ու քանակը : Այսպես՝ սպիտակ հողերում, վո-
րոնք ուշ են տաքանում, բայց արտացոլելով՝ տաքացնում են միջավայրը,
աճեցողությունը լինում է թույլ, բերքի քանակը պակաս, վորակն ընդ-
հանրապես բարձր : Սև հողերում, վորոնք շուտ են պաքանում, հետևա-
պես և շուտ չորանում, աճեցողությունը լինում է ուժեղ, բերքն առատ,
բայց վորակով ցածր :

5. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՋԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

(Կլիմայի, հողի, մշակույթի և տեսակների ազդեցությամբ)

Ստացվող արդյունքի վորակի և քանակի վրա անմիջորեն ազդեցու-
թյուն են ունենում, անշուշտ, խաղողի արտադրության գործոնները, այն
է՝ կլիման, հողը, մշակույթը և խաղողի տեսակը :

Ձերմուքյուն .— Պաղոզն ամեն տեղ չի աճում . անհրաժեշտ է ջեր-
մության վորոշ միջիմում, վորպեսզի խաղողի վազն աճի, բերք տա և հա-
սունացնի այդ բերքը : Որինակ՝ յեթե նոր-Բայազեդում խաղող չի ա-
ճում, այդ հետևանք է այն բանի, վոր այնտեղ չկա անհրաժեշտ քա-
նակությամբ ջերմություն՝ խաղողի աճման համար :

Այդեզործական շրջանում աճում են զանազան տեսակի և փոփոխակի
խաղողներ, վորոնք կարող են մի այլ շրջանում չաճել . մեծ մասամբ այդ
հետևանք է լինում նրա, վոր այս վերջին շրջանում ավելի պակաս ջեր-
մություն է լինում : Ամեն մի փոփոխակ իր աճման և բերքատուլթյան
համար պահանջում է մի վորոշ միջիմում ջերմություն : Կան փոփոխակ-

ներ, վորոնք իրենց անձան և բերքատուության համար պահանջում են վեզիտացիոն շրջանում 4000—5000 աստիճան և նույնիսկ ավելի, բայց և կան այնպիսիները, վորոնք բավարարում են 2800—3000 աստիճանով: Անշուշտ, այն յերկրներում, վորտեղ 3000 աստիճանից ավելի ջերմութուն չկա վեզիտացիոն շրջանում, չեն կարող աճել 4000—5000 աստիճան պահանջող փոփոխակները:

Նոր այդի գցելու ժամանակ պիտի նկատի ունենալ ավյալ վայրի վեգետացիոն շրջանի ջերմության գումարը և ըստ այնմ կատարել սորտի մենտի ընտրութիւնը:

Լույս.—Թիփի զարգացումը և խաղողի հասունութիւնը մեծ կախում ունեն լույսից:

Արևի ճառագայթները պայմանավորում են տերևների աստիճանային աշխատանքը, մասնակցելով թիփի զարգացմանը և պտղի հասունացմանը:

Հայտնի յե, վոր ծառերի տակ բերքը պակաս և լինում կամ նույնիսկ չի լինում, ինչպես և լույսից զրկվելուց կամ անբավարար քանակից խաղողը խակ և մնում: Լույսի պակասութեան դեպքում տերևները յենթարկվում են եթիոքման և հեշտութեամբ արեահարվում են:

Եփսոսացիքի*) — Այս կամ այն եքսպոզիցիայի ընտրութիւնը վերին աստիճանի կարելիոր հարց և:

Հարավային շրջաններում, վորտեղ անհամեմատ ավելի շատ և տաքութիւնը և լույսը, պետք և առավելութիւն տալ հարավ-արևելյան կամ հարավ-արևմտյան եքսպոզիցիաներին: Հյուսիսային շրջաններում՝ հարավային եքսպոզիցիաներին:

Հողը — Ինչպես վերը մատնանշեցինք, խաղողի վաղը հողի նկատմամբ պահանջուող չէ, բայց չնայած դրան, հողի Ֆիզիկական կազմութիւնը և քիմիական բաղադրութիւնն անհրաժեշտ ազդեցութիւն ունեն վաղի աճեցողութեան և բերքի քանակի ու վորակի վրա, վորովհետև աճեցողութիւնը և պտղատուութիւնը նախ կախում ունեն արմատային սիստեմի դրութիւնից և գործունեութիւնից, վորի զարգացումը կախված է հողի հատկութիւնից, յերկրորդ՝ հողի մեջ գտնված սննդաբար նյութերի քանակից և նրանց փոխհարաբերութիւնից:

ՄՇԱԿՈՒՅՑԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ — Մշակույթը մեծ ազդեցութիւն ունի վաղի աճեցողութեան, բերքի քանակի և վորակի վրա:

Կասկածից-վեր և, վոր հողի ձմեռային և ամառային մշակութիւնը, պարարտացումը, վաղի կապումը, հիվանդութիւնների դեմ պայքարելը և մի շարք այլ միջոցներ չեն կարող հսկայական ազդեցութիւն չունենալ ստացվող խաղողի, ինչպես վորակի, նույնպես և քանակի վրա:

*) Եքսպոզիցիան հողի դերքն և արևի հանդեպ. որինակ՝ արևկող կամ հարավային եքսպոզիցիան այն լանջն է, վորը նայում է հարավին. հյուսիսային եքսպոզիցիան նայում է հյուսիսին, արևելյանը՝ արևելքին և այլն:

ՓՈՓՈՒՍԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ — Գոյութիւնն ունեն մեծ քանակութեամբ խաղողի փոփոխակներ, վորոնք միևնույն հաջողութեամբ չեն մշակվում այդեզործական տարբեր շրջաններում: Այդ տեսակետից փոփոխակի ճիշտ ընտրութիւնը խոշոր նշանակութիւն ունի այդեզործութեան զարգացման ասպարեզում: Հաշվի առնելով տեղական կլիմայական և հողային պայմանները, ավյալ շրջանի համար փոփոխակներ ընտրելիս պիտի առաջնորդվել այդեզործութեան ուղղութեամբ: Միաժամանակ աչքաթող չպիտի անել վաղի հատկութիւնները, այսինքն նրա պտղաբերութիւնը, դիմացկանութիւնը զանազան հիվանդութիւններին, վնասատուներին և բնութեան արհաւիրքներին:

6. ԽԱՂՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈՒՍԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈՒՍԿՆԵՐ — Յեվրոպական խաղողի փոփոխակների թիվը հասնում է հազարների: Իրանք իրարից տարբերվում են զանազան նշաններով (արտաքին տեսք, պտուղների և նրանցից ստացված պրոզուկտների վորակ): Տարբեր արտադրութեան համար դործածվում են տարբեր փոփոխակներ:

Յնչնելով դրանից, մենք խաղողի փոփոխակները կարող ենք խմբավորել ըստ նրանց դործածութեան յեղանակի, այսպես՝ սեղանի խաղողի փոփոխակներ (արվան խաղողներ), գինու փոփոխակներ և այլն:

ՍԵՂԱՆԻ ԽԱՂՈՂԻ ՓՈՓՈՒՍԿՆԵՐ — Մուսկատները տարածված են տաք յերկրներում: Լավ զարգանում են քարոտ լանջերին և կարմիր կավի վրա: Զգայուն են դարնանային ցրտերին: Դիմացկուն են յերաշտին: Յենթակա յեն ռիզում հիվանդութեան և փտում են:

Սեղանի մուսկատներից մեզ համար ուշադրութեան արժանի յե ալեքսանդրյան մուսկատը. այս տեսակի մշակույթը հաջողութեամբ կարելի յե զարգացնել տաք շրջաններում: Ալեքսանդրյան մուսկատը պահանջում է պտղաբեր խորը հող: Բերքատու է. հատիկները խոշոր են, յերկարավուն. կեղևը հաստ է, կանաչ գեղնագույն: Միջուկը հյութալի յե, քաղցր, մուսկատի ուժեղ համով:

Վոսկեգույն շապան լավագույն, շատ տարածված խաղող է: Այս խաղողը պահանջում է փափուկ, ավազոտ, մի փոքր քարոտ հող՝ բարեկառն կլիմաներում, բայց և աճում է կլիմայական և հողային ամենաբազմազան պայմաններում: Շուտ հասնող է: Վոսկեգույն շապան համարվում է բուժիչ լավ փոփոխակ: Հատիկները միջակ, համասար մեծութեան են: Բարակ կեղև ունի, դեղնա-սաթի գույն: Միջուկը քաղցր է, հյութալի, բերքատուութիւնը միջակից բարձր:

Մուսկատած շապան սեղանի լավ փոփոխակներից մեկն է. վողկույզը միջակ մեծութեան: Հատիկները խոշոր են, միջին մեծութեան, մուս-

կատի արամատով: Ծուռ և հասնում. բերքատուությունը չափավոր և սրահանջում և բախական սղաքեր հող:

Գյանջալին (Թայրիդենի) եքսպորտի լավ խաղող և: Պտղաբեր հողում տալիս և լավ բերք: Լավ աճում և չոգ կլիմայում: Վողկույզը խոշոր և, կոնաձև, թևավոր: Հատիկները շատ խոշոր են, կանաչա-դեղնա-դույն: Կեղևը հաստ և, միջուկը քաղցր, դուրեկան համով: Հեշտ և սառնում փոխադրությունը և լավ պահվում և:

ԳԻՆՈՒ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ

Սեմիլյոն.— Բարեխառն գոտում այս փոփոխակից ստացվում և բարձրորակ սեղանի դինի, իսկ տաք կլիմայում՝ կիսաքաղցր և քաղցր դինի: Ծուռ և հասնում: Հողի նկատմամբ պահանջկատ չէ: Վողկույզը մեծ և: Հատիկները խոշոր են, բաց-դեղնադույն: Միջուկը քնքուռ և, հյութալի: Միջակ բերքատուություն ունի:

Կաբերնե սև փոփոխակ և: Հասնում և վոչ շատ ուշ: Հողի նկատմամբ այնքան էլ պահանջկատ չէ. վատ և զարգանում կրային հողի վրա: Չոր, ճալաքարոտ, լավ տաքացող հողում Կաբերնեն տալիս և լավազույն փորակի բերք: Բերքատուությունը միջակ և: Վողկույզը միջակ, կոնաձև, ամուր: Հատիկները մանր են, ամուր, բախական հյութեղ միջուկով: Տալիս և լավ կարմիր դինիներ՝ շատ դուրեկան համով, պայծառ դուրեղ և յուրահասուն նուրբ բուրմունքով:

Սպիտակ մուսկատ.— Տալիս և լավ մուսկատի դինիներ, տաք շրջաններում ընդհանրապես տալիս և բարձրորակ բյուրավետ դինիներ: Վողկույզը միջակ մեծության և, պինդ. հատիկները միջին մեծության են, վոսկե-դեղնադույն. միջուկը քաղցր և և մուսկատի ուժեղ բուրմունքով:

Պեդրո-սիլմենս.— Մրանից ստացվում և բարձրորակ լիկյորի դինի. դործածվում և նաև իրրև սեղանի խաղող. վողկույզը միջակ մեծության և, փխրուն, հատիկները նույնպես միջակ մեծության են, ձվաձև, հասնելուց հետո՝ վոսկե-դեղնադույն. կեղևը բարակ, միջուկը հյութալի, քաղցր. շուռ և հասնում. լավ դինիներ ստացվում են չոր, աղքատ հողերում:

Սալիերավի.— Մրանից ստացվում և շատ դուրեղ և դուրեկան թթվությամբ սեղանի դինի: Վողկույզը մեծ և, կոնաձև. հատիկները խոշոր են, կեղևը բարակ. միջին բերքատուություն ունի:

Վերդեյո.— Տալիս և հիանալի լիկյորի դինի. վողկույզը միջակ մեծության, փխրուն, հատիկները միջակ մեծություն ունեն, կեղևը թափանցիկ և, դեղնա-վոսկեդույն. ուշ և հասնում. բերքատուությունը միջակից բարձր:

Վերը թված խաղողի փոփոխակներից,— վորոնք դործնականում ստուգված են,— անսլայվան պետք և ընտրություն կատարել անկերու համար՝ հաշվի առնելով տեղական պայմանները (կլիմա, հող և այլն):

Հայաստանի փոփոխակները նույնպես հայտնի յեն իրենց շատ գրական կողմերով: Այդ փոփոխակները լավ ծանոթ լինելով մեր ընթերցողներին՝ այստեղ չենք նկարագրում: Այնուամենայնիվ, ամենորդ չենք համարում այստեղ տալու Հողփոփոխման կողմից ընդունված փոփոխակների սորտիմենտը՝ ըստ այդեդործական արտադրության:

Հյուսիս համար.— Ճիլար, խարջի, գառան-դմակ, որդույլ և բանանց փոփոխակները:

Գինու համար.— Սարջի, ճիլար, մուսկատներ (չլիսավորապես սպիտակ), սեմիլյոն, Ֆուրմին, սերսիալ, վերդելյո, պեդրո փոփոխակները:

Ղամարլիլ շրջանի համար.— Կախեթի, սափերավի, սևուրգա, կաբերնե:

Կոնցետրատների համար.— Սարջի, ճիլար, մսխալի, ալգորա, կախեթ:

Սեղանի համար.— Յեղանդարի, ասկյարի, քիշմիշ, իծապտուկ, խարջի, խալիլի, գառան-դմակ, շաֆեյ, թավրիդենի, հաշարաշ, մսխալի, ալխակի, մադլեն, անժեխին:

Չամիչի համար.— Բիշմիշ, շիր-շիրա, ասկյարի, իծապտուկ, ալեքսանդրյան, մուսկատ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՋԵՐԸ, ԻՐԻԵՎ ՊԱՏՎԱՍՏԱԿԱԼՆԵՐ

Ամերիկյան վաղը, թող չափադանցություն չլինի, յեթե ասեմք, վոր հանդիսացալ խաղողի յեվրոպական տեսակի փրկիչը այդեդործության չարիքից՝ Ֆիլոքսերայից: Բազմաթիվ սխալներից հետո վերջին հաշվով ամերիկյան վաղի դիմացկանությունը ավեց փայլուն արդյունքներ: Ներկայումս Ֆիլոքսերայի տարածման հետևանքով շատ շրջաններում կարելի չե ամեցնել խաղող՝ միայն շնորհիվ Ֆիլոքսերային դիմացկուն ամերիկյան պատաստակալների, վորոնց պատվաստում են տեղական, Ֆիլոքսերայի ազդեցությամբ չորացող վաղեր:

Պատվաստված թփերը բաղկացած են յերկու մասից. ներքին՝ արմատային սխտեմից, վորը հանդիսանում և իրրև պատվաստակալ և վերին՝ մնացած որդաններից, վորը հանդիսանում և իրրև պատվաստացու: Պատվաստակալի ընտրությունից և կախված պատվաստման հաջողությունը, ինչպես և բերքատուությունը, դրա համար էլ անհրաժեշտ և պատվաստակալ ընտրելիս ուշադրություն դարձնել նրա Ֆիլոքսերային դիմացկանության, ինչպես և նրա տեղական հողային պայմաններին հարմարվելու և պատվաստացվի հետ ունեցած ազդակցության վրա: Նույնպես անհրաժեշտ և, վոր պատվաստակալը հեշտությամբ ար-

մատակարար: Հողային պայմաններին հարմարվելը կապ ունի հողի պարունակած կրի (կալցիում կարբոնատի) քանակի և վորակի հետ: Այն հողերում, վորտեղ մեծ քանակությամբ կամ հեշտ լուծվող կիր կա, ամբարիկյան վազերը հիվանդանում են ջրորոգով: Նույնպես պետք է նկատի ունենալ պատվաստակարի աղդեցության խնդիրը պատվաստացվի աճեցողության, բերքատվության, թվի յերկարակեցության վրա:

Համառոտ կերպով կանգ առնենք ավելի հայտնի և տարածված պատվաստակարների վրա:

Ռիպարիա.—Ռիպարիա Գլուար և Ռիպարիա Գրան Գլարբ: Շատ դիմացկուն են Ֆիլոքսերային. վախենում են յերաշտից, մասնավորապես Ռիպարիա Գլուարը. հողը պետք է լինի խոնավ, խոր և բերրի: Հողում յեղած կրի մեծ քանակ չի տանում:

Ռուպեստրիս Դյուլ.—Միանգամայն դիմացկուն է Ֆիլոքսերային: Հողը պետք է լինի չոր, քարոտ, չփոշիացած:

Ռիպարիա-Ռուպեստրիս 101-14.—Միանգամայն դիմացկուն է Ֆիլոքսերային: Հողը պետք է լինի կավային և միջին քանակությամբ կիր պարունակող: Արագացնում և հասունությունը և բարձրացնում է բերքատվությունը:

Ռիպարիա-Ռուպեստրիս 3309.—Դիմացկուն է Ֆիլոքսերային. պահանջում է քարոտ և կավոտ հող. ընդհանրապես պահանջկոտ չէ հողի նկատմամբ:

Ռիպարիա-Սոլոնիս 1616.—Բավականաչափ դիմացկուն է Ֆիլոքսերային: Հողը՝ խոնավ, բերրի և չոր ավազային: Բարձրացնում է բերքատվությունը, հեշտությամբ արմատակարում է:

Բացի մատնանչված պատվաստակարներից, հիշենք նաև Մուրվեդր-Ռուպեստրիս 1203, Շասլա Բերլանդեյի 14-Ե, Բերլանդեյի Ռիպարիա, վորոնք նույնպես իրենց ցուցաբերել են լավ կողմից՝ ջրորոգող հողերում:

7. ՆՈՐ ԱՅԳԻ ԳՑԵԼԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

Յեղնելով ժողովրդատնտեսական ընդհանուր պլանից, յուրաքանչյուր հանրապետության առանձին շրջանների համար վորոշվում է տնտեսության ուղղությունը, աչք ուղղությունը կապակցվում է նաև ագրիկուլտուրայի ուղղությանը (թարմ խաղողի արտադրություն, խաղողի հյութի արտադրություն, գինեգործություն և այլն):

Յեղնելով այս հիմնական դրույթից և հաշի տոնելով տեղական կլիմայական և հողային պայմանները, պետք է կազմակերպել ագրիկուլտուրան անտեսություն:

Անցնենք այն աշխատանքների հիմնական տեսակները նկարագրումք, վոր անհրաժեշտ է կատարել աչքի զցելու ժամանակ:

Հաղի չորացումը և վորոգումը.— Յեթե խաղողի համար հատկացված հողամասում հանդիպում են տեղեր, վորտեղ ջուր է կանգնած՝ անհրաժեշտ է չորացնել հողը, վորովհետև շատ խոնավ հողերում վազի արմատները փոտում են, վորի հետևանքով ամբողջ թուփը չորանում է: Հողի չորացման նպատակով կատարում են, այսպես կոչված՝ գրենաժ, վորի հիմնական նպատակն է՝ դանազան կառուցումների միջոցով (խողովակներ դնելով հողի տակ կամ վորոշ ուղղությամբ քարեր կամ ֆաշիններ (արքատի կամ ջախի խուրձեր), դարսելով նույնպես հողի տակ և կամ վերջապես հասարակ առուներ հանելով) հողի մեջ գտնված ավելորդ ջրին ճանապարհ բանալ: Այն հողերում, վորտեղ բավարար չափով խոնավություն չկա, վազի աճեցողության համար, ընդհակառակը, պիտի մտածել վորոգման մասին:

Այդու համար հող հատկացնելուց հետո անհրաժեշտ է կատարել հիմնաշրջում, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ հողի խորը մշակում: Հիմնաշրջման նպատակն է նպաստավոր պայմաններ ստեղծել խաղողի վազի թե' արմատային սխտեմի և թե' վերերկրյա մասի զարգացման համար:

Նախապես պետք է հողը կարգավորել, բաժանել առանձին հողամասերի, անցկացնել ճանապարհներ, կառուցել վորոգման ցանց:

Հիմնաշրջում կատարելու ամենալավ ժամանակն է աշնան վերջը, իսկ վորտեղ հնարավոր է՝ նաև ձմռան սկիզբը: Մայրահեղ դեպքում հիմնաշրջում են նաև դարնանը: Հիմնաշրջման խորությունը կախված է կլիմայից և հողի պայմաններից: Հարավային շրջաններում, վորտեղ կլիման չոր է, մասնավորապես այնտեղ, վորտեղ վորոգում չկա, որինակ՝ Ղրիմի տափաստանային մասում պետք է խորը հիմնաշրջում անել, մինչև 70 սմ.—1 մետր խորությամբ, վորպեսզի խոնավություն ամբարվի հողի ավելի խորը շերտերում: Հյուսիսային մասերում, վորտեղ բավարար չափով խոնավություն կա՝ հիմնաշրջում կատարվում է 40-50 սմ. խորությամբ:

Ներկայումս հիմնաշրջման առավելապես ռացիոնալ և եժան միջոցն է հանդիսանում տրակտորային մշակումը:

Այսպես որինակ՝ աչքեգինեգործական խորհտնտեսությունների Սեվաստոպոլի խմբում հիմնաշրջման մի հեկտարի ձեռքով մշակումը նոտել է 1-600 ո., իսկ տրակտորային մշակումը՝ «Ռուստոն» և «Կլեյտոն» սխտեմի տրակտորներով՝ միայն 158 ուրբլի՝ 70 սմ. խորությամբ, 8 ժամյա աշխատանքային ուրում արտադրելով 0,75 հեկտար: Հիմնաշրջման միջոցով հիշյալ տրակտորներով խաղողի անկումը ավել է բավարար արդյունքներ:

Մեր յերկրի արագ զարգացող էլեկարիֆիկացիան հետզհետե ընդ-

1008
3480
9001

դրքիւմ եւ դյուլատնտեսութեան հիմնական ճյուղերն ու նրանց առանձին պրոցեսները: Այդեղործութեան մեջ նույնպէս ելեկտրականութիւնը մեծ դեր ունի կատարելու և առաջին հերթին այդու հողային աշխատանքները մեխանիզացիայի յենթարկելու գործում: Հողային աշխատանքներից ամենահիմնականը՝ հիմնաշրջումը յենթակա յե ելեկտրիֆիցիայի, և, ինչպէս կատարված փորձերը ցույց են տարիս (Անապայի շրջան), այդ ձևով հիմնաշրջած հողերը տալիս են միանգամայն բազմաբար արդյունքներ: Ելեկտրականութեան միջոցով վոչ միայն արագանում են այդի գցելու տեմպերը, վոչ միայն հեշտանում եւ աշխատանքը, այլև զգալի կերպով իջեցվում եւ ինքնարժեքը (Անապայի շրջանում մի հեկտարի հիմնաշրջումը նստել ե 72 ուրբլի, մինչդեռ հենց նույն տեղում ձեռքի հիմնաշրջումը նստել 1.600 ու): Ելեկտրականութեամբ կատարած հիմնաշրջման ինքնարժեքը կախում ունի ելեկտրական եներգիայի ինքնարժեքից, հետևապէս մեզ մոտ, վորտեղ ելեկտրոններդիան համեմատաբար էժան ե, հիմնաշրջումն ավելի էժան կնտի): Հենց այդ պատճառով «Արարատ» տրեստն իր նոր գցվող այգիների համար արդեն կազմակերպում ե հիմնաշրջում ելեկտրականութեան միջոցով:

Բացի մասնանշված միջոցներից, կարելի յե կիրառել հիմնաշրջման պայթեցման մեթոդը, վորը համար հողը վորում են վորոչ խորութեամբ, կողքից դնում են պայթուցիկ ականներ և այդպիսով ուզած խորութեամբ և լայնութեամբ կարողանում են հողը փխրացնել: Այս մեթոդի պահասավոր կողմն այն ե, վոր հողի վերին և ներքին շերտերի անհավասար շրջում և դասավորում ե կատարվում: Սակայն ունի և մեծ տուժելութուններ. նախ՝ աշխատանքը կարելի յե կատարել տարվա ամեն ժամանակին, այսինքն՝ նույնիսկ այն ժամանակ, յերբ հողը ծածկված ե ձյան շերտով. յերկրորդ՝ 25—100 անգամ ավելի արագացնում ե աշխատանքը, քան ձեռքով կատարած հիմնաշրջումը.—13 բանվորական ձեռքի ոգնութեամբ մի որում հիմնաշրջվում ե մի հեկտար տարածութուն:

Վերջապէս, քանի վոր մենք առայժմ չունենք եներգիայի բազմաբար քաղա, ինչպէս ժամանակավոր միջոց պետք ե ողապարծել հիմնաշրջումը ձեռքով և ձիով:

Կարևոր աշխատանքներից մեկն ե անկանյութի նախապատրաստումը, վորովհետև անկելիք խաղողի աճումը և բերքատուութունը նկատելի չափով կախված ե անկելիք նյութի վորակից:

Լավ անկանյութ ստանալու համար անհրաժեշտ ե ամենալուրջ ուշադրութուն դարձնել մատերի և արմատակալած կտրոնների ընտրութեան վրա:

Սովորաբար անկելու համար վերցնում են միամյա մատեր, վորոնք

կարելի յե կարել տերեւաթափից հետո, մինչև աչքերի բացումը: Տնկելու համար կտրոններ վերցնում են առողջ և բերքատու թփերից: Չպետք ե կտրոններ վերցնել միջրիու, ողիում, անտրակնող հիվանդութուններով հիվանդ և ծաղկավիժման յենթարկվող թփերից:

Լավ թուփ, լավ արմատավորում ստանալու համար պետք ե վերցնել միջակ աճեցողութեան և միջակ յերկարութեան միջհանգուցավոր կտրոններ:

Կտրոնի յերկարութունը կախված ե նրանց տնկելու խորութեանից: Ինչքան չոր ե հողը և կլիման, այնքան ավելի խորն են տկում կտրոնը և հետևաբար մեծ յերկարութուն են տալիս կտրոններին:

Այդիները կարելի յե տնկել նաև արմատակալած կտրոններով, վորոնք իբրև տնկելու նյութ՝ անպայման լավ են:

Փիլոքսերայով վարակված շրջաններում այգիներ պիտի տնկել միայն ամերիկյան պատվաստակալների վրա պատվաստած վաղերով: Գլխ համար հատուկ անկարաններում պատվաստում են տեղական վաղերը ամերիկյան կտրոնների վրա և ապա արմատակալել տալուց հետո տեղափոխում են մշտական այգիների տեղը: Տնկելու ժամանակ անհրաժեշտ ե ուշադրութուն դարձնել վոչ միայն արմատների և շիվերի զարգացման, այլև պատվաստի հյուսվածքի վրա: Պատվաստի հուսվածքն այնքան ամուր պիտի լինի, վոր յեթե յերկու ձեռքով բռնելու լինենք պատվաստակալն ու պատվաստացուն և ձեռքերը հակառակ ուղղութեամբ պտտեցնենք, պատվաստը չկտրվի:

Տնկելը.— Հաշի առնելով տեղական պայմանները (կլիմա, հող, ջերմութուն) տնկելու ժամանակ պետք ե վորոշել թփերի միջև թողնելիք տարածութունը, տնկելու ձևը, հողամասերի բաժանումը, շարքերի ուղղութունը, փոփոխակներ խմբավորումը: Սոսերով թփերի միջև թողնելիք տարածութեան և հողամասերի բաժանման մասին՝ մենք պետք ե հիմնականում յեննենք մեխանիզացիա կատարելու անհրաժեշտութունից: Եարքերի միջև թողնելիք տարածութունը պետք ե վերցնել 2—2,5 մետր: Այս դեպքում շարքերի միջև ազատ կարող են անցնել դանազան տրակտորներ, ինչպէս որինակ՝ «Կլետրակի», «Ալմայի» և այլն:

Ներկայումս դժբախտաբար խաղողի այգիներում մենք հանդիպում ենք թփերի անկանոն դասավորման, վորը դժվարացնում ե հողի մշակումը և խաղողի խնամքը:

Թփերի կանոնավոր դասավորման համար անկում են ջառակուտի, յեռանկյունի և շարքերով:

Յելնելով սոցիալիստական անտեսութեան եյութունից (եներգեափկա, տրանսպորտ, կառուցումներ և այլն), ջառակուտի ձևը հիմնականում ամենաընդունելին և թե՛ հողմասի կազմակերպման և թե՛ մատեր

տնկելու տեսակետից, վորովհետև այդ ձևն է, վոր ասպհովում է աշ-
գեգործական աշխատանքների առավելագույն մեխանիզացիան, ինչպես
և տեխնիկական դեկավարութեան կազմակերպումը:

Յեռանկյունի տնկելու ժամանակ յերեք հարեան թիերից յուրա-
քանչյուրը գտնվում է հավասարակողմ յեռանկյունու գագաթին: Մեր
աղայմաններում աղայիսին առաջարկելը միտք չունի, վորովհետև նախ՝
գծվար է հողի գծագրումը և տնկումը, ապա համեմատարար թանկ է
նստում, վորովհետև տրակտորի աշխատանքի արտադրողականութեան
ընկնում է շատ մեծ չափով:

Շարքերի ուղղութիւնը.— Հարթ տեղերում և չվորովոր հողե-
քում շարքերին ուղղութիւն տալը մեծ նշանակութիւն չունի, իսկ դա-
ռիվայրերի վրա պետք է նկատի ունենալ հողի մշակման նպատակահար-
մարութեանը դատիվայրի լայնութեամբ, վորի ուղղութեամբ և դասավոր-
քում են շարքերը: Այդ անհրաժեշտ է մանավանդ վորովոր հարմա-
բութեան համար: Այն վայրերում, վորտեղ փչում են գարնանային և ա-
մառային ուժեղ քամիներ՝ պետք է շարքերը դասավորել քամիների ուղ-
ղութեամբ, յեթե դրան չի խանգարում վորովոր հնարավորութեանը:

ժողովրդական տնտեսութեան պլանից յեղնելով է, վոր մենք կա-
ռուցում ենք այս կամ այն տնտեսութեանը: Ամեն մի տնտեսութեան
կառուցելիս պիտի վորոշել, թե ինչ փոփոխակներ պիտի տնկենք: Փոփո-
խակները ընտրութեանը պիտի բլխեցնենք աղեգործութեան այն ուղղու-
թեանից, վոր տրված է տվյալ շրջանին: Չպետք է ընկնել փոփոխակնե-
րի բաղմադանութեան հետեից, այլ ընտրել խիստ սահմանափակ սոր-
տիմենտ, վորովհետև այդ կհնչտացնի աշխատանքի բոլոր տեսակները և
համեմատարար կեժանացնի արտադրանքի արժեքը: Այդ դեպքում աշ-
գեգործութեան ասպարիզում աշխատող կադրերին, ավելի լավ ծանոթա-
նալով սահմանափակ թիվով փոփոխակների հետ, ավելի հնչտութեամբ
կկարողանա աղել այդ վայրերի աճեցողութեան վրա, վորով ըստ ցան-
կութեան կարող են փոխել բերքի վորակն ու քանակը:

Այդու տերիտորիայի կազմակերպումից և գծագրումից հետո ան-
հրաժեշտ է մատեր կամ արմատակալածներ տնկել: Տնկելը հնարավոր է
տուճներով կամ սանդերով:

Տնկելուց հետո նախ և առաջ պետք է ուշադրութեան դարձնել տըն-
կան մատող բույսերի վրա, վորի համար անհրաժեշտ է պայքարել ա-
ռաջ յեկած մոլախոտերի դեմ՝ քաղհանելու միջոցով: Նույնպես անհրա-
ժեշտ է հողը փխրեցնել՝ արմատներին ոգ տալու և հողի մեջ յեղած ճու-
րը տնտեսելու նպատակով: Անհրաժեշտ է նաև ժամանակին ջրել: Թե
քանի անգամ պիտի քաղհանել կամ փխրեցնել հողը, կամ քանի անգամ
պիտի ջրել, այդ կախված է հողի հատկութեանից: Վորոշ տեղերում բա-
վական է 2—3 անգամ քաղհանել, իսկ մի այլ տեղ՝ 4—5 անգամ: Ջրելը

նույնպես վորոշ տեղերում բավական է 2—3 անգամ ամբողջ ամառու-
նի թացքում, իսկ այլ տեղ՝ 8—10 անգամ:

Պատվաստած արմատակալածով տնկելու դեպքում, նկատի ունե-
նալով, վոր պատվաստացուն տալիս է արմատներ, իսկ պատվաստակա-
լը՝ շիվեր, վորոնք կթուլացնեն պատվաստը, անհրաժեշտ է վորոչնաց-
նել այդ շիվերն ու արմատները, վորի համար թմբերը պիտի բանալ ա-
ռաջին անգամ մոտավորապես հունիս ամսին, կտրել պատվաստակալից
դուրս յեկած շիվերն ու պատվաստակալի տված արմատները և աղ-
նորից ծածկել, իսկ ոգոստոսին նորից քանալ, վորից հետո այլևս հար-
կավոր չէ պատվաստի տեղերը ծածկել, վորպեսզի պատվաստի հյուս-
վածքի փայտացում կատարվի:

Մնկային հիվանդութեանները կանխելու համար, անհրաժեշտ է
սրսկել (2—3 անգամ) բորդոյան հեղուկ միլիլիտրի դեմ և քիչ էլ ծծում-
բափոշի՝ ոյիլիումի դեմ:

Տերեաթափից հետո մատող աղին պիտի թաղել:

Տնկելուց հետո, յերկրորդ գարնանը, մարտի սկզբին, յերբ ալլևա-
ցրտահարութեան չի սպասվում կատարվում է թիերի բացումը: Թիերը
բացանելուց հետո կատարվում է նրանց առաջին ետը, վորն անհրաժեշտ
է վերջացնել մինչև հյուլի շարժման սկիզբը:

Չարգացող բոլոր շիվերից թողնվում է ամենաուժեղը, լավ նստա-
ծը, իսկ մյուսները հեռացվում են: Մնացած շիվը կտրվում է 2—3 աշ-
քով:

8. ՊՏՂԱԲԵՐ ԱՅԳՈՒ ԽՆԱՄՔԸ

Ինքն իրեն թողնված խաղողի թուփն աճում է և հասնում մեծ չա-
փերի, տալով բաղմաթիվ անկանոն ճյուղավորութեաններ: Աղայիսի
վաղի բերքը լինում է շատ անհավասար, իսկ հատիկները՝ մանր, թթու և
քիչ շաքար պարունակող:

Ետելով՝ մենք կարգավորում ենք թիլի աճումը, նպաստում ենք
պտղատու շիվերի առաջացմանը, լավացնում ենք պտուղների վորակը:

Խաղողի վաղի հանգստի ժամանակ կատարված ետը կոչվում է ձմե-
ռային կամ չոր ետ, իսկ հյուլի շարժման ժամանակ կատարվածը՝ կա-
նաչ կամ ամառային հատում:

Թիերի ետի ժամանակ պետք է գիտենալ, վոր առանձին մատերի
հեռացումը կամ կրճատումն առաջ է բերում շիվերի ավելի ուժեղ ա-
ճում, վորի հետևանքով ամբողջ թիլի աճման ուժը պակասում է: Հյու-
լի շարժումը դանդաղեցնող բոլոր պտտմանները փոքրացնելով թիլի
աճման ուժը, առաջ են բերում առատ բերքատվութեան:

Ետի յերեք ձևեր կան. կարճ, յերկար և խառը:

Կարճ ետի ժամանակ պտղատու մատերի վրա թողնում են 2—3 աշք:

յերկար ետի ժամանակ՝ մատերը կաղմվում են 5 և ավելի աչքերից, իսկ լրատը ետի ժամանակ, միևնույն թիվի վրա միքանի ճյուղ ետում են կարճ, մյուսները՝ յերկար: Կարճ ետի ժամանակ վազի մնացող մասը կոչվում է ճկուժ կամ բիթ:

Ետի յերկարութունը կախված է խաղողի փոփոխակից, թիվի ամ- ման ուժից, յերբքափության աստիճանից, հողի խոնավությունից, թվերի ձևից:

Ետելու ժամանակ անհրաժեշտ է ուշադրութուն դարձնել թողած մատերի վորակի վրա, դերադասելով միջակ հաստության լավ հասած- ները: Ետի ժամանակ կտրում են հնարավորության չափ աչքից բարձր՝ թեքելով նրա հակառակ կողմը:

Ետը կարելի չէ կատարել տերևաթափից հետո, հանդատի ամբողջ քնթացքում: Մեզ մոտ, այգիները թաղելու և խիստ ձմեռ ունենալու պատճառով ետը կատարում են դարնանը, այգիները բանալուց հետո, փորելուց առաջ:

Ամառային հատումը ղերարելու է խաղողի վազի շիվերին:

Կանաչ հատումը կանոնավորում է ստղատավությունը, ուժեղացնում է խաղողի վողկույզի զարգացումը:

Կանաչ հատում կամ սուղը տալ ասելով մենք հասկանում ենք հե- տևյալ դործողությունը—ծերատում, բողբոջատում, բճատում, չվա- տում, ողակավորում և նոսրացում:

Բողբոջատումը յեվ չվատումը պետք է կատարվեն ինչքան կարելի չէ մաղ, և դործնականում սովորաբար հեռացվում են այն բոլոր շիվերը, վորոնք անպտուղ են լինում: Առաջին բողբոջատելու ժամանակը սովոր- աբար վորոշվում է ծաղկի կոկոններով, վորոնք լավ նկատվում են դար- քացող բողբոջների վրա: Անպտուղ շիվերից թողնվում են միայն նրանք, վորոնք փոփոխակներ են հանդիսանում: Շվատում պետք է կատարվի թիվի ամման ուժի համեմատ, այսինքն՝ այն թիվերը, վորոնք ավելի ու- ժեղ են ամում՝ պետք է ավելի քիչ բողբոջատել և չվատել:

Վեգետացիայի ընթացքում չվատումը կատարվում է միքանի (2—3) անգամ:

Ծերատում.—Ծերատումն այն է, վոր դեռևս մատաղ հասակում շիվի ծայրը հեռացվում է մինչև ծաղկելը և անմիջապես ծաղկելուց հետո:

Ծերատման միջոցով մենք հասնում ենք թիվի ամման կանոնավոր- ման, ապահովում ենք պտղի լավ բեղմնավորում: Ուշ կատարվող ծերա- տումն ավելացնում է բերքի վորակը:

Ողակումը, ինչպես և կանաչ ետման բոլոր վերահշյալ տեսակները մի ընդհանուր նպատակ ունեն. բուսական հյուսվածք ուղղել թիվի այն որ- քանները, վորոնց առավելագույն զարգացումն առանձնապես ցանկալի չէ: Եթիվ վրա, առաջին վողկույզից կամ ծաղկաթիթությունից ներքև

հանգամ է կեղևի վոր լայն ողակ՝ կեղևի տակի կանաչ ժառից, վորը կոչվում է լուբ: Գանի վոր լուբը հանդիսանում է տերևներում մշակվող սննդանյութերի փոխադրողը, ապա այդ սննդարար նյութերն ողակման շնորհիվ մնում են շիվի կտրված քից վերև, հետևաբար այդ նյութերն սղ- տադործվում են շիվի հենց այդ մասում, և դրա շնորհիվ մենք կանխում ենք ծաղկաթիթումը, նպաստում ենք վողկույզի լավ ամմանը և հետևա- բար՝ առատ և լավ վորակի բերքափությունը և ավելի վաղ հասունա- նալուն:

Ծաղկաթիթումը կանխելու համար յեղած ողակումը կատարվում է ծաղկելուց մի քիչ առաջ, իսկ լավ անունդ ապահովելու համար՝ ծաղկ- ման միջոցին կամ մի քիչ հետո:

Ուշ ողակումն ողուտ չի բերում, ընդհակառակը՝ մնասակար կեր- սույլ է անդրադառնում բերքափության վրա, վորովհետև վերքը դեմ- վար է առողջանում, վորի հետևանքով սուժում են տերևներն ու շի- վերը, հետևաբար՝ տուժում է բերքափությունը և ուշանում է հա- սունացման ժամանակը: Ողակումը պետի կատարել այն հաշվով, վոր յերքն ամբողջովին ծածկվի խաղողալիցից մի քանի որ առաջ:

Նոսրացումը հանդիսանում է վողկույզի վորոշ քանակի հատիկների կամ վողկույզի մասերի հեռացումը, վոր հնարավորություն է տալիս մնացած հատիկներին ավելի լավ զարգանալու և վողկույզներին տալիս է ավելի կանոնավոր ձև: Վողկույզի նոսրացումով խաղողը շատ դի- մացիլուն է դառնում ձմեռը պահելու համար: Նոսրացումը կատարվում է սովորաբար դուռա կաղմելուց անմիջապես հետո, իսկ բնախոտերն իզական ծաղիկներով փոփոխակների համար՝ միայն նրանից հետո, յերբ դուռաները հասնում են սիսեռի մեծության: Վողկույզների նոսրա- ցում կատարում են սեղանի խաղողի մշակման դեպքում:

Ինքնին պարզ է, վոր օղակավորումն ու վողկույզների նոսրացումը խոշոր տնտեսություններում չեն կարող կիրառվել:

Կապելու նպատակն է մատերի և շիվերի պաշտպանությունը մի կող- մից, և նրանց վորոշ ուղղությամբ զարգացնելու ապահովումը՝ մյուս կողմից: Մատերը կապում ենք ետից հետո և դրանով նախ թույլ չենք տալիս, վոր այդ մատերը կտրվեն քամիներից, վորի դեպքում զրկվում ենք բերքի վորոշ մասից և հաջորդ կանոնավոր ետը կատարելու հնա- րավորությունից, յերկրորդ՝ դրանով մենք ստիպում ենք կապած մա- տերի աչքերից դուրս յեկած շիվերին վորոշ ուղղությամբ զարգանա- լու, վորը մեծ հնարավորություն է տալիս մեխանիզացիայի յնթար- կելու ամառային աշխատանքները:

Նույն նպատակով կապում ենք նաև մատերի վրա զարգացած շիվե- րը: Ընդհանրապես շիվերը միանգամից չենք կապում, այլ յերկու, յերբեմն յերեք նվազ:

Պաղտղի թփի ձևավորման հիմնական նպատակն է՝ լուսի, «դէ» քերթութեան առավելագույն ոգտադործումը, վորից հենց կախված է ստացվող պտղի վորակը և քանակը, ինչպես և ետի հեշտացումը:

Ձևավորման բազմաթիվ սխտեմներ կան. համարյա չկա այդեդործական մի շրջան, վոր իր համար ստեղծած չլինի ուրույն սխտեմ, այդպես ել պետք է լիներ, քանի վոր վաղի պտղավորումը կախում ունի տվյալ շրջանի բնապատմական և տնտեսական պայմաններից:

Ձևավորման բոլոր սխտեմների մեջ մենք կարող ենք դտնել վորոշ ելեմենտներ, վորոնց քանակական տարբերությունից կախում ունի ամեն մի սխտեմ: Այսպես՝ ամեն մի սխտեմում մենք ունենք վաղի բունը, թեկերը և մատերը: Բունը լինում է միայն մի հատ, սակայն նա կարող է լինել մեծ կամ փոքր, ուղղահայաց կամ թեք, հորիզոնական և այլն: Տարբեր սխտեմներ կտարբերվեն բնի մեծությամբ և ուղղությամբ: Ամեն մի սխտեմի մեջ թեկերը կարող են լինել 1, 2 (դոյուս) յերկկողմյա, 3 (բաժայ, հովհար) կամ ավել (բաժակ, հովհար, կորդոններ). այդ թեկերը կարող են տարբեր մեծության լինել, ինչպես և դասավորված լինել մի կետում (որինակ՝ բաժակ, հովհար) և տարբեր կետերում (կորդոններ). թեկերը մի կետում դասավորված լինելու դեպքում կարող են դտնվել մի մակարդակի վրա (հովհար) կամ տարբեր մակարդակների վրա (բաժակ): Այսպիսով, տարբեր սխտեմներ տարբերվում են իրարից թեկերի քանակով, մեծությամբ, ուղղությամբ և դասավորման կարգով:

Յուրաքանչյուր թեկի վրա կարող ենք ունենալ մեկ կամ մեկից ավելի մատ, մատերը նույնպես կարող են ունենալ մեկ կամ շատ աչք: Մեկից ավելի մատ ունենալու դեպքում մատերը կարող են ունենալ միևնույն քանակությամբ աչքեր կամ մեկը՝ յերկու աչք (ձկութ, փոխարինող), մյուսը՝ մեծ քանակությամբ աչքեր (պտղաբեր մատ, սլաք): Այսպիսով, ուրեմն, տարբեր սխտեմներ տարբերվում են նաև թեկերի վրա դտնված մատերի քանակով, ուղղությամբ և մատերի վրա դտնված աչքերի քանակով:

Ասացինք, վոր սխտեմը կախում ունի տվյալ շրջանի բնապատմական և տնտեսական պայմաններից: Անշուշտ խոնավ տեղերում բունը չի կարող կարծ լինել, վորովհետև խաղողը կփտի. նույնպես քամոտ տեղերում բունը չի կարող բարձր լինել, առանց ուժեղ հենարանի, վորովհետև կարող է կտրվել: Այդ պատճառով այնտեղ, վորտեղ խոնավ է և խիստ քամիներ կան, բունը ձևավորում են բարձր և հենարաններն ամրացնում ուժեղ, իսկ այնտեղ, վորտեղ խոնավ չէ, կամ

հենարանները (ինչպես Շարանտի վորոշ շրջաններում) այդեդործների վրա թանդ են նստում՝ բունը շատ կարծ են պահում, նույնիսկ հողի մակերևից ցածր:

Այնտեղ, վորտեղ այգիները ձմռան սառնամանիքներից պաշտպանելու համար ստիպված են թաղել, նույնպես բունը չեն կարող բարձր թողնել:

Հարցը կոնկրետացնելով մեր պայմաններին, պետք է նշել, վոր մեր հին այգիներում վաղի թուփը ձևավորված չէ: Անշուշտ մեր նոր սոցիալիստական տնտեսություններում չենք կարող թուփը ձևավորել, քանի վոր հակառակ դեպքում մենք սաստիկ կհարվածենք ետի աշխատանքի արտադրողականությանը: Մյուս կողմից՝ տեսնում ենք, վոր մեր պայմաններում վաղերը շատ ուժեղ են աճում, շնորհիվ մեր կլիմայական պայմանների և արհեստական վտուղման: Այսպիսի պայմաններում վաղի փարթամությունն ոգտադործելու համար մեր հին սխտեմի թիվերի վրա թողել են մեծ քանակությամբ թեկեր:

Մեր հին այգիների տեղական սխտեմը նոր խոշոր այդեդործական տնտեսություններում չի կարող կիրառվել, քանի վոր այդ սխտեմը հարմարեցված է թմբին: Թումբն արդելք է հանդիսանում խոշոր այդեդործական տնտեսությունների կազմակերպմանն ու զարգացմանը, քանի վոր թումբը հնարավորություն չի տալիս այգիները մեխանիզացիա մտցնելու: Հետևաբար, հրաժարվելով հին այգիների թմբային սխտեմից, պետք է ընդունել նորը: Այդ նորը պիտի համապատասխանի հետևյալ պահանջներին. —

1. Այդեդործության մեխանիզացիայի յենթարկվող պրոցեսները լիակատար մեխանիզացիայի հնարավորությունը:
2. Բերքատվության քանակի և վորակի ապահովումը:
3. Վտուղումն և ձմռան սառնամանիքներից պաշտպանելու նպատակով թաղելու հնարավորությունը:

Վերահիշյալ պահանջների բավարարող սխտեմը հովհարն է, վորին պիտի տալ ցածր բուն, 2-ից ավելի թեկ (3, 4 և այլն), նայած աճեցողության պայմաններին՝ ամեն թեկի վրա թողնելով մեկ մատ՝ 3, 4, 5 աչքով, դարձյալ ըստ աճեցողության պայմանների:

Հովհարի թեկերը դուրս են դալիս համարյա մի կետից և դասավորված են մի մակարդակի՝ ցանկաչարի մակարդակի վրա: Մատերը կապվում են ցանկաչարի ցածր լարի վրա, իսկ մատերից դուրս յեկած չիվերը՝ յերկրորդ և յերրորդ լարերի վրա:

ԱՅԳՈՒ ԷՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողի մշակումը մեծ նշանակություն ունի թիկերի աճման և բերքա-
տալության համար:

Հողի մշակումը կարող է տեղի ունենալ թիկի հանդատի շրջանում
և ակտիվ շրջանում:

Առաջին դեպքում հողի փխրացումը տեղի յե ունենում խոր կեբայով,
իսկ յերկրորդ դեպքում՝ մակերեսային:

Հողը մշակելով, մենք հողում հավաքում և խնայում ենք խոնա-
փությունը, ստեղծում ենք անբացիտայի բարենպաստ պայմաններ, վո-
րոնք այնքան անհրաժեշտ են արմատներին շնչառության համար, հնա-
րավորություն չենք տալիս մոլախոտերին աճելու, և շնորհիվ հողի
փխրացման՝ նրան հարստացնում ենք սննդարար նյութերով:

Վազի հանգիստ շրջանի խոր վարը կարելի յե հասցնել 15-20 սմ., նա-
յած տեղական պայմաններին: Հարավային ու չոր տեղերում, յե՞՞՞
այդինքը չեն թաղում՝ լավ և վար անել ձմռան սկզբին՝ մթնու-
տային տեղումներն ավելի լայն կերպով ուղտադործելու և հողը ողի ազ-
դեցությանն ավելի լավ յենթարկելու համար:

Հողի ամառային մշակումը, վորի խորությունը կարող է լինել
1-8 սմ., կատարվում է հողը փափկացրած վիճակի մեջ պահելու, մո-
լախոտերը հեռացնելու և հողի մակերեսը հավասարեցնելու նպատա-
կով: Այդ մակերեսային վարը կատարում են 2-3 անգամ կամ ավելի,
նայած տեղին՝ մայիսին մինչև ծաղկումը և ծաղկումից հետո՝ հունիսի
վերջին, հուլիսի մեջ կամ հուլիսի վերջին:

Հնարավորության չափ պետք է հաճախ վարել՝ ձգտելով ժամա-
նակին վոչնչացնել (մասնավորապես անջրդի տեղերում, անձրևներից
հետո) կեղևները և աճող մոլախոտերը: Բերքատալության բարձրաց-
ման լավագույն գրավականներից մեկը հողը մաքուր, փխրուն դրու-
թյան մեջ պահելն է:

Պարարտացում.—Նորմալ զարգացման համար, խաղողի թուփը պա-
հանջում է սննդարար նյութերի վորոշ տեսակ և քանակ: Տասնյակ տա-
րիներին ընթացքում թիկերը գտնվում են միևնույն տեղում, յուրաքան-
չյուր տարի հողում պակեցնելով սննդարար նյութերի պաշարը, վո-
րոնք դնում են պտուղների, տերևների և մատերի կազմության վրա:
Դրա համար աճումը և բերքատալությունն ապահովելու համար ան-
հրաժեշտ է հողը մտցնել զանազան տեսակի պարարտանյութեր, վո-
րոնք կլրացնեն սննդանյութերի այս կամ այն տեսակի պակասը:

Գործածվող պարարտանյութերը բաժանվում են որդանական և
հանքային տեսակների:

Ավելի քան անհրաժեշտ նյութերից են ազոտը, ֆոսֆորաթթվուտը

և կալիին, վորոնք հաճախ պակասում են հողում կամ գտնվում են
բույսին անմատչելի դրության մեջ:

Պարզելու համար, թե խաղողի այդին իսկպես ինչ պարարա-
նյութի կարիք է դրում՝ պետք է հողը տալ անալիզի: Որդանական
պարարտանյութ ասելով, մենք հասկանում ենք գոմաղբը, կենդանական
և բուսական մնացորդները, խաղողի քուսպը (գինեգործության ժամա-
նակ ստացված մնացորդը) և այլն, իսկ հանքային պարարտանյութն է՝
Չիլիի սալպետրը, ամոնիում սուլֆատը (ազոտային պարարտացում-
ներ), սուպեր-ֆոսֆատը, ֆոսֆորիտներ տոմասչակը (ֆոսֆորա-
թթվուտային պարարտացումներ), կալիում սուլֆատը, քլորային
կալին (կալիի պարարտացումներ):

Վառագում.—Հողում անհրաժեշտ քանակով խոնափության առկա-
յությունը խաղողի այգու աճման և բերքատալության հիմնական պայ-
մաններից մեկն է: Հիմնաշրջումը (սլանտաժ), հողի մշակությունը՝
միջոցներ են, —ինչպես մենք քիչ վերև պարզեցինք,—վորոնք ապահո-
վում են խոնափության անհրաժեշտ քանակը:

Հարավային, չոր և չոք շրջաններում, վորտեղ հողի մեջ խոնափու-
թյան պակասն ավելի յե զգացվում, սահմանափակվել հիմնաշրջումով,
հողի մշակմամբ միայն՝ չի կարելի անհրաժեշտ է խոնափություն տալ
արհեստական կերպով, վոռոգման միջոցով և այն ժամանակ, յերբ այդ
պահանջում է թուփը:

Վոռոգման զանազան տեսակների ընտրություն կախված է ջրի բա-
նակից, ժամանակից, վորի ընթացքում պետք է առաջնորդվել հողի
ուելեֆով:

Վոռոգման ժամանակ և ջրելու քանակը նույնպես կախված են յու-
րաքանչյուր շրջանի պայմաններից: Աշտարակում անհամեմատ ավելի
հաճախ է հարկավոր ջրել, քան Ղամարլվի շրջանում: Ընդհանրապես
բարձրորոտ հողերում և լանջերում ավելի հաճախ պետի ջրել, քան սե-
վահողում և հարթավայրերում: Տեղեր կան, վոր ամբողջ առամիս ըն-
թացքում մի անգամ է հարկավոր ջրել, բայց և կան տեղեր, վորտեղ
հարկավոր է լինում 10-15 որը մի անգամ ջրել:

Վորպեսզի վոռոգումից առավելագույն ոգուտ ստացվի՝ պետք է
վոռոգումը կատարել ժամանակին և կանոնավորել վոռոգման ժամանակ
գործածված ջրի քանակը:

Խորհուրդ է տրվում խաղող հավաքելուց հետո, ուշ աշնանը կամ
ձմռան սկզբին վոռոգել խաղողի այդին, վորովհետև այդպիսով ջրի
պաշար է ստեղծվում, վորն ապահովում է խաղողի հետևյալ շրջանի
նորմալ զարգացումը և պտղատալությունը:

9. ՎԱՁԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Վաղի վրա մեծ քանակությամբ հիվանդություններ ու վնասատուներ են զարգանում, բայց մենք կանգ կանենք միայն մի քանի գլխավոր վնասատուների և հիվանդությունների վրա:

Պետք է նշել, վոր անհրաժեշտ է ուժը կենտրոնացնել վոչ թե առաջ յեկած հիվանդությունների բժշկման վրա, այլ ժամանակին միջոցներ ձևը առնել նրանց կանխելու համար, այսինքն, կիրառել պրոֆիլակտիկան:

Տնտեսության կազմակերպիչը, դյուղատնտեսը, խորհտնտեսության բանվորը կամ կոյունտեսականն ամբողջ վեգետատիվ շրջանի ընթացքում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն միանգամայն առողջ թփերը ժամանակին դուժեղու վրա, վորպեսզի հնարավորություն չտան հիվանդություններին ու վնասատուներին զարգանալու:

Վաղի հիվանդություններն առաջ են գալիս կենդանական և բուսական ծաղում ունեցող եյակներին, վորոնցից մի քանիսը մանր, միկրոսկոպիկ են, մյուսներն՝ ավելի խոշոր: Բուսական ծաղում ունեցող հիվանդածին եյակները մեծ մասամբ սնկերն են, իսկ վաղի լուրջ հիվանդություններն առաջ բերողները հենց սնկերն են: Կենդանական ծաղում ունեցող հիվանդածին եյակները մեծ մասամբ միջատներն են, վորոնք հաճախ բույսին վնաս են հասցնում նրա այս կամ այն որդանը փչացնելու միջոցով, վորի պատճառով հաճախ կրում են վնասատու անունը:

Անցնենք սնկային հիվանդությունների և նրանց դեմ պայքարելու միջոցների նկարագրությանը:

ՈՒԴԻՈՒՄ.—Սև, ալյուրոց: Հիվանդության պատճառը *uncinula otiralis* կոչված սունկն է, վորն իր թելիկներով վերեկից ծածկում է կանաչ որդանները, ինչպես շիվերն են, տերևները և վողկույզները, վորոնք թվում են թե պատած են մոխրով:

Որդիումը վաղ է յերևան գալիս և տարածվում է բողբոջների ու մատաղ շիվերի վրա, իսկ հիվանդության խիստ տարածված տարիներում դանդաղեցնում է շիվերի աճումը:

Յերբ տերևներն են վնասվում, սունկը դրանց ծածկում է յերկու կողմից, և դրանք ընդունում են կեղտոտ մոխրի գույն, կուչ են գալիս, չորանում են և վաղաժամ թափվում:

Վնասված հատիկները ծածկվում են մոխրագույն փոշիով, այլևս չեն մեծանում և ճաքում են, ճաքած տեղից յերևում են կորիզները: Վողկույզը կարող է հիվանդանալ մինչև խաղողալիցը, վորից հետո նա ապահով է, այլևս չի հիվանդանա:

Պայքարի միջոցները.—Թփի փոշոտում ծծմբով, վորը կանխում է կամ դադարեցնում է հիվանդությունը: Փոշոտում են նայած տեղին՝ 3-4 անգամ, յերբեմն նույնիսկ ավելի: Մեղ մոտ, Հայաստանում, հաճախ բավարար է լինում յերկու անգամ:

Յերբ յերեք անգամ են փչում ծծումբը, առաջին անգամ պետք է փչել դարնանը, բողբոջները բացվելուց հետո, յերբ մատաղ շիվերը հասնում են 10-15 սմ. յերկարության, յերկրորդ անգամ պետք է փչել ծաղկման ժամանակ և յերրորդ անգամ՝ ծաղկելուց մոտ 3-4 շաբաթ հետո:

Մեղ մոտ առաջին անգամ պետք է փոշոտել ծաղկման շրջանում, յերկրորդ անգամ մոտավորապես հունիսի վերջին, հուլիսի սկզբին:

Միլդիու (*Չոու*) հիվանդությունն առաջանում է *Plostopora viticulis* կոչված սնկից, վորը զարգանում է վաղի կանաչ մասերում, ինչպես տերևների, շիվերի, հատիկների հյուսվածների մեջ, վորտեղ սնվելով ի հաշիվ այդ հյուսվածների՝ չորացնում է դրանց:

Տերևների վրա յերևան են գալիս դեղին և ապա դորշ բծեր: Դրանք տերևի ներքևի մասում ծածկված են լինում սպիտակ փոշիով, վորը կարելի չէ ձեռքով մաքրել: Հիվանդության ազդեցությամբ տերևները չորանում են ու թափվում, վորի հետևանքով վաղը հյուսվում է և բերքը լավ չի հասնում:

Վնասված հատիկները ծածկված են սպիտակ փոշիով, չորանում են ու թափվում: Հասնող հատիկները դառնում են գորշագույն և նույնպես չորանում են:

Միլդիույի զարգացմանը նպաստում է անձրևոտ, մառախլապատ և ցողառատ տաք ու խոնավ յեղանակը:

Նրա հասցրած վնասը, մանավանդ նրա խիստ զարգացման տարիներին՝ շատ մեծ է, յերբեմն զրկում է այդու բերքի 20-50 և նույնիսկ 100 տոկոսից:

Պայքարի միջոցը՝ թփերի սրսկումն է բորդոյան հեղուկով (պղնձի արջասպի և հանդցրած կրի լուծույթի խառնուրդ՝ վորոչ հարաբերությունները):

Միլդիույի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է 3-ից մինչև 10 սրսկում ամբողջ սեզոնի ընթացքում, նայած տեղի կլիմայական պայմաններին և տարվա յեղանակին: Մեղ մոտ անհրաժեշտ է լինում անհրաժեշտ 2-3 սրսկում:

Առաջին սրսկումը կատարվում է հենց ծաղկելուց առաջ, մոտավորապես մայիսի 10-20-ին, յերկրորդ անգամ՝ ծաղկելուց անմիջապես հետո, մոտավորապես հունիսի 5-10-ին, իսկ յերրորդ անգամ՝ մոտավորապես հունիսի վերջին, հուլիսի սկզբին:

Բծավար անսրաֆնոգ. — Առաջ և դալիս dbaosporis im ampelium օրն-
վից: Շիվերի, տերևների և հատիկների վրա առաջանում են վոչ մեծ
կլոր բծեր:

Վնասված շիվերը ծածկվում են գորշագույն բծերով, վորոնք
հետզհետե սևանալով՝ խորանում և խոցեր են առաջացնում: Բծերի խո-
րանալն առաջանում է նաև հատիկների վրա:

Հիվանդութունն ընդհանրապես մեծ վնասներ առաջ չի բերում,
սակայն յերբեմն վորոշ տեղերում (որինակ՝ Ղուրդուղուլու շրջանի Գե-
ջբլու գյուղում) բավական խիստ դարդանալով՝ դանդաղեցնում է վա-
ղի աճեցողութունը, և մնաս հասցնելով տարվա բերքին՝ մնասում է
նաև հետևյալ տարվա մասերին, վորոնք ծածկված լինելով խոր վեր-
քերով՝ դժվարացնում են ետը:

Պայքարի միջոցը. — Թիվի հանդիստ ժամանակ մատերին քսում են յեր-
կաթի արջասպի թուփը լուծույթ (մինչև 35-40 տոկոս), իսկ ամառվա
բնթացքում պետք է պայքարել ծծմբի և կրի խառնուրդի կամ մենակ
ծծմբի փոշոտումով, կամ նույնիսկ բորոգյան հեղուկով: Վերհիշյալ
լուծույթը պետք է կատարել ետից հետո և վոչ ուշ, քան բողբոջներն
արձակվելուց յերկու շաբաթ՝ առաջ:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՉԻՏՆԵՐ. — Ֆիլոֆսերյա. — Խաղողի մնասատու-
ների մեջ ամենասարսափելին և կործանիչը Ֆիլոքսերան է: Բուն դե-
լով խաղողի վաղի արմատների վրա՝ այս փոքր միջատը քայքայում է
արմատային սխտեմը, վորից թուփը շատ շուտով վոչնչանում է:

Ֆիլոքսերայի հայրենիքն Ամերիկան է: Նա Յեվրոպա յե անցել ա-
մերիկյան արմատացած վաղերի հետ միասին, վորոնք առաջ ներմուծ-
ված էին իբրև դեկորատիվ բույսեր, իսկ հետո՝ իբրև ուղիղումին
դիմադրող վաղ:

Ամերիկայում Ֆիլոքսերան գտնվել է 1854 թ. ենտոմոլոգ Ապա-
Ֆիտչի միջոցով: Յեվրոպայում Ֆիլոքսերան յերևան է հանել Վիստ-
վալը 1863 թ. Լոնդոնի չեքմատան խաղողի տերևների վրա: Բայց վոչ
Ադաֆիտիչը և վոչ էլ Վիստվալը առանձին նշանակութուն չեն տվել
դանված միջատներին:

Սկսած 1863 թվից հարավային Ֆրանսիայում սկսեցին փչանալ
խաղողի առանձին թիեր և ամբողջ այգիներ:

Ֆիլոքսերան առանձնապես ուժեղ կերպով իրեն դզալ տվեց հարա-
վային Ֆրանսիայում՝ 1865-66 թվերին: Խաղողի այգիների փչացման
պատճառները պարզելու համար հատուկ հանձնաժողով կազմվեց, վո-
րին մասնակցում էր հայտնի պրոֆեսոր Պլանչոնը:

Պրոֆեսոր Պլանչոնին հաջողվեց փչացած թիերի արմատների վրա
յերևան հանել մանր, հազիվ նկատելի միջատներ, վորոնց Պլանչոնը ան-

վանեց «Ֆեդաֆիս Վաստատիքս», բայց շուտով Փարիզի հայտնի միջա-
տաբան Սինյորեն վերանվանեց «Ֆիլոքսերա Վաստատիքս», և ա՛հա այդ
ժամանակվանից Ֆիլոքսերա անունը դառել է շատ ժողովրդականացած
անուն:

1895 թ. Ֆրանսիայում Ֆիլոքսերայից հասած վնասները, ըստ պ.
Վիալայի, հասնում էին մոտ 7 ու կես միլիարդ ուրբլու:

Կարճ ժամանակում Ֆիլոքսերան տարածվեց աշխարհի համարյա
բոլոր այգեգործական շրջանները: Ֆիլոքսերան Ռուսաստան յեկավ ան-
ցյալ դարի 70-ական թվականների սկզբին՝ Երֆուրտից (Գերմանիա),
բայց առաջին անգամ հայտարարվեց 1880 թ. Ղրիմի արևմտյան մասում:
Դրանից հետո Ֆիլոքսերան յերևան յեկավ մեղ մոտ, Անդրկովկասում
(Սուխումի շրջակայք), ապա Հյուսիսային Կովկասում, Դոնում, Ստավ-
րոպոլում և այլ տեղեր:

ԽՍՀՄ յեվրոպական մասում, մոտ 70,000 հեկտար խաղողի այգի-
ներ վարակված են Ֆիլոքսերայով, վոր կազմում է խաղողի այգիների
ընհանուր տարածության 45 տոկոսը:

Ֆիլոքսերան սպառնում է լվիճներ ընտանիքին և աչքի յե ընկ-
նում շատ բարդ դարդացմամբ: Ամառը արմատների վրա դարդանում է
Ֆիլոքսերայի արմատային ձևի մի քանի սերունդ, վորոնք բազմանում
են առանց բեղմնավորման, ձու յեն աճում, վորոնցից դուրս են դալիս
աչքով հազիվ տեսանելի, պայծառ դեղնագույն, յերկարավուն և բա-
վական շարժուն, ընդհամենը 2 միլիմետր յերկարությամբ միջատներ:

Նրանք նստում են մատաղ, հյուսիս արմատների վրա, վորոնց մեջ
խրում են իրենց կնճիթները, սնվելու նպատակով, և առաջացնում են
վրջված հանդուցիկներ: Հանդուցիկների առաջացման հետևանքով ար-
մատները կարող են ընդունել շատ բազմատեսակ ձևեր:

Ավելի հաստ արմատների վրա Ֆիլոքսերան առաջացնում է պալա-
րիկներ:

Այս պալարիկները յեվրոպական փոխոխակների վրա առաջացնում
են արմատների փառում, վորի հետևանքով վաղն ամբողջովին փչա-
նում է:

Ֆիլոֆսերայով վնասված լինելու ցայտուն, առաջին արտաքին նշա-
ները նկատվում են վարակման միայն յերրորդ տարին: Չորրորդ տա-
րին, Ֆիլոքսերայով վարակված թուփն ունի աչքի ընկնող նշաններ. —
հազիվ դարդացած մի քանի շիվ՝ նոսր, մանր, դեղնագույն կամ կար-
մրագույն տերևներով: Թուփը չի ունենում մանր արմատներ: Լինում
են միայն արմատների հաստ, փառոց մնացորդներ:

Հինգերորդ տարին թիվի վնասված փչացման տարին է: Փչացման
ժամկետը, անշուշտ կախված է հողից, կլիմայական պայմաններից,
այգու մշակումից, վոռոգումից և այլն: Մի տեղ մի այգի կարող է

չորանալ վարակվելուց հետո չորրորդ տարին, մի այլ այլի դեռ կարող է պտղաբերել ութերորդ տարին:

Ամառվա կեսին արմատների վրա յերևան են դալիս շատ շարժուն, մի քիչ ավելի խոշոր Ֆիլոքսերաներ, թևերի սաղմերով, վորոնք կազմում են Ֆիլոքսերայի հարսնյակներ: Դրանք դուրս գալով հողի մակերեսը, փոխում են շապիկը և վերածվում թևավոր Ֆիլոքսերայի: Յուրաքանչյուր թևավոր տերևի շղերի միջև կամ կեղևի ճեղքվածքներում ածում է 1-10 խոշոր կամ մանր ձվեր: Խոշոր ձվերից (մինչև 0,45 մմ. յերկարությամբ) դուրս են գալիս եղեր, մանր ձվերից (0,26 մմ.-0,28 մմ. յերկարությամբ) — դուրս են դալիս արուններ: Եղերն ու արունները կընձիթ չունեն, դրա համար ել չեն կարողանում սնվել: Նրանք ապրում են 7 օր: Եզը բեղմնավորվելով, ածում է մի հատիկ ձու յերկամյա մատի կեղևի տակ. այդ ձուն կոչվում է Ֆիլոքսերայի ձմռան ձու:

Ձուն ածելուց հետո եզը մեռնում է:

Գարնանը ձմռան ձվից դուրս է գալիս մի հատ Ֆիլոքսերա, վորը չորս անգամ շապիկ փոխելով՝ դառնում է ձու ածող եզ:

Այդ եզը նստում է խաղողի մատող տերևների վերին յերևի վրա և իր ծծելու հետևանքով առաջ է բերում մի ուռուցք, վորը կախվում է տերևի ներքևի կողմից. այդ ուռուցքի մեջ եզը առանց բեղմնավորման դնում է վորոչ քանակությամբ ձու, վորոնցից դուրս են գալիս իր նման Ֆիլոքսերաներ: Այս եզերը բազմանում են առանց բեղմնավորման՝ նոր ձվեր դնելով կամ հաստաավելով նույն ուռուցքի կամ նոր ուռուցքների մեջ, վորոնք նույն ձևով առաջ են բերում նույն տերևի կամ հարևան մատող տերևների վրա:

Այդ ուռուցքները կոչվում են դալլեր, իսկ դալլերի մեջ ապրող Ֆիլոքսերաները դալլիկուրա կամ տերևի Ֆիլոքսերաներ: Յերրորդ, չորրորդ սերնդից տերևի Ֆիլոքսերաների մի վորոչ մասն իջնում է արմատների վրա և վերածվում արմատների Ֆիլոքսերայի:

Ֆիլոքսերայի զարգացման լրիվ ցիկլը կարելի չէ դիտել ամերիկյան վազերի վրա, իսկ յեվրոպական վազերի վրա զարգանում է արմատի Ֆիլոքսերան. դալլեր յեվրոպական տերևների վրա՝ հազվադեպ բացառությամբ՝ չեն առաջանում:

Արմատային Ֆիլոքսերան մի քանիստ տալիս է չորսից (հյուսիսային շրջաններում) մինչև տաս (հարավային շրջաններում) սերունդ (դեներացիա):

Մարդիկ Ֆիլոքսերայի դեմ պայքարելու միջոցներ նվաճել են հազիս աշխատանք և միջոցներ վատնելուց հետո միայն:

Առաջին անգամ Ծրանսիայում նկատվել է, վոր յեվրոպական վազերի հետ միասին անկված ամերիկյան վազերը չեն վնասվում Ֆիլոքսերայից: Պարզվել է, վոր ամերիկյան վազը դիմացկուն է Ֆիլոքսերա-

յին, միաժամանակ նկատվել է, վոր վորոչ տեսակներ ավելի շատ են դիմանում, մյուսներն՝ ավելի քիչ:

Ամերիկյան տեսակները թեև Ֆիլոքսերային դիմացկուն են, բայց նրանց խաղողն անպետք է թե ուտելու և թե վերամշակության համար. ուտել նրանք չեն կարող փոխարինել յեվրոպական փոփոխակներին: Այդ պատճառով, Ֆիլոքսերայով վազակված շրջաններում այդի ունենալու համար պետք է յեվրոպական, լավ խաղող ունեցող փոփոխակները պատվաստել ամերիկյան, Ֆիլոքսերային դիմացկուն արմատներ ունեցող տեսակներին:

Ներկայումս պայքարի հիմնական մեթոդն է խաղողի մշակումը Ֆիլոքսերայի դիմացկուն պատվաստականների վրա:

Բացի դրանից, այնտեղ, վորտեղ բավարար քանակով ջուր կա և կլիմայական ու տեղական պայմանները հնարավորորեն են տալիս՝ աչնանը կամ ձմռանը 1-2 ամսով խաղողի այգիները ջրի տակ են թողնում, վորտեղ ջուրը կանգնում է բարձր հողի մակերևութից 15-20 սմ.: Ջրով ծածկելուց հետո Ֆիլոքսերան վոչնչանում է: Բայց ջրով ծածկելն ունի իր թերությունները, առաջ է դալիս շիվերի աճում վորի հետևանքով ավելանում է վազի յեմթակայությունը անկային հիվանդությունների և զարնան ցրտահարություններին:

Խաղողի այգիներն ավազահողի վրա զարգացնելու դեպքում, յեթե հողը պարունակում է 75 և ավելի տոկոս շարժուն ավազ (կվարցի ավազ) Ֆիլոքսերան չի կարողանում ապրել: Ավազը պետք է լինի շարժուն, քիչ պարունակի ավազի հատիկները միմյանց հետ կպցնող նյութեր, կիր, որդանական նյութեր, վորովհետև հակառակ դեպքում վազի դիմացկանությունը կընկնի:

Կիրառվում է Ֆիլոքսերայի դեմ պայքարելու այսպես կոչված՝ ռադիկալ մի միջոց, յերբ յուրաքանչյուր քառակուսի մետր տարածության համար հողի մեջ են մտցնում 200-300 դրամ ծծմբածխածին: Այս միջոցը նպատակահարմար է գործադրել այն դեպքում, յերբ վարակված է վոչ մեծ տարածություն: Ֆիլոքսերայի հայտնի ուսումնասիրողներից մեկը Ա. Սիլանտեը գտնում է, վոր ռադիկալ մեթոդը «ցույց տվեց իր գործնական անպետքությունը մասսայական վարակման պայմաններում»: Սակայն, յերբ մի այդեղործական վոչ վարակված շրջանում հայտարելվում է վարակված մի բիծ, վորը հետագայում կարող է ամբողջ շրջանի վարակման աղբյուր դառնալ, նրա դեմ անպայման պիտի պայքարել ռադիկալ մեթոդով: Այդ ռադիկալ մեթոդի շնորհիվ է, վոր Արևմտյան այգիում բուրբուխները և Ֆիլոքսերայից, չնայած հենց Արևմտյան է, վոր ամբողջ Ռուսաստանում ամենից շատ է վարակվել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

	Էջ
1. Առաջաբանի փոխարեն	3
2. Ներածութիւն	4
3. Վազի ելեմենտները և նրանց դերը	6
4. Այգու հողի համառոտ բնութագիրը	10
5. Այգեգործութեան վրա ազդող գործոնները	11
6. Խաղողի հիմնական փոփոխականների ընտրութիւնը	13
7. Նոր այգի դրելը և նրա խնամքը	16
8. Պաղարեր այգու խնամքը	21
9. Խաղողի վազի հիվանդութիւնները և վնասատուները	28

«Ազգային գրադարան»

NL0280811

११७८ ३५ भाग.

20 187